

**ԲՆԱԳՐԵՐ  
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ**  
*TEXTS ET ETUDES*

2.

D

## ԱՆԱՆԻԱՅԻ «ՔԱՆԻԿՈՆԻ» ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ<sup>1</sup>

Անանիայի «ՔԱՆԻԿՈՆԻ» մասին շատ է գրուել ու խօսուել:

Այսօր բաւական որոշ պատկերացում ունենք Անանիայի այս կոթողային երկի մասին՝ չնորհիւ մեծավաստակ Արտ. Մաթեւոսեանի հիմնարար աշխատութիւնների<sup>2</sup>: Զանց առնելով Քննիկոնի նկարագրութեան կրկնութիւնը, որ հանգամանալի արւած է Արտ. Մաթեւոսեանի աշխատութիւններում, նշենք միայն, որ ըստ այսօրուայ ամենալրիւ պատկերացման՝ Քննիկոնը եղել է Հայոց բարձրագոյն դպրոցների համար նախատեսուած ուսումնական ձեռնարկ, որ պարունակել է ժամանակի ուսուցանուող բոլոր գիտակարգերը՝ եռեակ եւ քառեակ գիտութիւնները: Ընդ որում, այստեղ ուսումնական ծրագիրը կազմուած է եղել այնպէս, որ ուսուցումն սկսուել է ոչ թէ եռեակ գիտութիւններից, ինչպէս մինչ այդ եղել է Հայաստանում եւ այլ վայրերում, այլ քառեակ գիտութիւններից եւ ի մասնաւորի՝ համարողութեան արուեստից, դրա առաջին մասից, որ է գումարման գործողութիւնը: Բացի բուն քառեակ ու եռեակ գիտութիւնները, Քննիկոնի մէջ եղել է նաև պատկառելի ծաւալով օրացուցային մաս՝ Տոմարը: Ուշագրաւ է, որ Անանիայի գործերին անդրադարձած մեր երկու երեւելի պատմագիրները Անանիայի այս գործը յիշում են յատկապէս Տոմարի կապակցութեամբ:

Այսպէս. Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտցին իր Պատմութեան մէջ նոյնիսկ առանց Քննիկոնին անդրադառնալու,

1 Այս աշխատութեան համառուստարակը իրեւ գեկուցում կարդացուել Մ. Աբոն Ս. Էջմիածնում՝ Գեորգեան Ճեմարանի հիմնադրման 140-ամեակին նուիրուած գիտաժողովում 2014 նոյեմբերի 21ին:

2 ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., Անանիա Շիրակացու «ՔԱՆԻԿՈՆԻ», ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտութիւնների, 1974, թիւ 7, 66-78, թիւ 8, 71-81: Նոյն, Եւկղիդէսի «Տարերքը» Անանիա Շիրակացու «ՔԱՆԻԿՈՆԻ» երկրաշափութեան մաս, Լրաբեր հասարակական գիտութիւնների, 1980, թիւ 1, 89-95, նոյն, Անանիա Շիրակացու թուարանութեան բաժանման գործողութիւնը, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1990, թիւ 10, 53-64: Նոյն, Գրիգոր Մագիստրոսը եւ Անանիա Շիրակացու «ՔԱՆԻԿՈՆԻ», Բանքեր Մատենադարանի, թիւ 16, 1994, 16-30:

**տալիս է.** «Իսկ Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն Հայկական տօմարի, զի թերեւս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասցէ յօրինել, զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց կամ յեղափոխ յեղանակի ժամանակաց: Վասն որոյ եւ առ ինքն զԱնանիայ Անեցի կոչեալ՝ որ բանիքուն այնմ արաւեստի էր հմուտ, երամայէ նմա ստեղծագործել զինդրեկին իւր: Իսկ նորա ջան ի վերայ եղեալ եւ ըստ բոլոր ազգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ Հայկական տօմարի. զի բարեձեւագունից ումանց եւ զմերս կշռադատեալ՝ մի՛ կարօտացուի գալ ի զուգաւորութիւն Հոռվմայեցւոց: Եւ մինչդեռ խորհեր մեծն Անաստաս ժողովօֆ եպիսկոպոսաց զեղեալսն հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց: Անփայթ զկնի եկեղեցն այսմիկ արարեալ՝ եւ զառաջին մշտախաղաց շրջագայեալ կարգն կալեալ: Յնտ այսորիկ Խորայէլ յՈդմսոյ գեղջէ՝ յաջորդէ զաթոռ հայրապետութեան»<sup>3</sup>: Այսինքն, Յովկ. Կաթողիկոսը խօսում է բացառապէս Անանիայի Տոմարի մասին, զանց առնելով այն մեծ երկը, որի մասն է եղել այդ Տոմարը:

**Աւելի կարճ, բայց եւ աւելի ամբողջական տեղեկոյթ է տալիս Ասողիկը:** Ստեփանոս Ասողիկի Պատմութեան մէջ ունենք. «Իսկ Անաստաս խորինալ Հայաստանեացս կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց՝ եւ երամայէ Անանիայի Շիրակացւոյ կարգել զբնիկոնն երաշագան, յորում զոտմարս մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասայ խորհեալ ժողովով եւ եպիսկոպոսօֆ հաստատել զբնիկոնն եւ վախճանի՝ կացեալ յաթոռն ամս զ»<sup>4</sup>: Այստեղ արդէն յատակ ասուած է, որ Անանիայի Տոմարը եղել է նրա Քննիկոնի բաղկացուցիչ մասը, եւ Քննիկոնը ստեղծուել է Տոմարի բարեփոխման կապակցութեամբ: Եւ կաթողիկոսը Անանիային կարգադրել է ոչ թէ պարզապէս Տոմար շարադրել, կամ Հայոց տոմարը կարգաւորել, այլ կաթողիկոսի յանձնարարութիւնը եղել է ստեղծել-շարադրել Քննիկոնը եւ դրա մէջ էլ՝ յատուկ՝ Տոմարը:

Ուշագրաւ է, որ մեր երկու պատմիչներն էլ Անանիայի գործունէութեան մասին գրել են օրացուցային բարեփոխութեան կապակցութեամբ: Նրանց գրածներից այնպիսի տպաւորութիւն է

3 ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏԸՆԻ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս 1912, 92–93:

4 ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ Ա.ՍՈՂԻԿ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ 1885, 99: Վկայաքերուած հատուածում երկու տեղ Քննիկոնի փոխարքեն տպագրում կայ «Քրոնիկոն» բառը, որ Ասողիկի երատարակող Ստ. Մալխանեանցն է դրել ձեռագրերում վկայուած «Քննիկոնի» փոխարքն, որի մասին ինքն էլ վկայում է. «Զնոպագիր». աստ եւ ստորեւ Քննիկոնն. տե՛ս նոյն տեղում, տողատակ թիւ 11: Խնդրոյ առարկայ հատուածը այստեղ շտկուած է ըստ ձեռագրի:

ստացւում, որ Անանիայի գործունէութիւնը (ուրեմն եւ՝ Քննիկոնի շարադրումը) ամբողջովին կապուած է եղել օրացուցային բարեփոխութեան հետ: Հասկանալու համար, թէ ի՞նչ կարող է սա նշանակել, ճշգրտենք Անանիայի Հայաստան գալու եւ Քննիկոնի շարադրման ժամանակները:

Սկսենք նրանից, որ ըստ մեր աղբիւրների՝ Անանիան Քննիկոնը գրել է Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի պատուէրով: Այս մասին ունենք բազմաթիւ մատենագրական վկայութիւններ՝ սկսեալ վերը յիշատակուած Ասողիկից ու Յովհաննէս կաթողիկոսից: Ուրեմն, Քննիկոնի գրութեան ժամանակը պիտի լինի Անաստաս Ակոռեցու գահակալման տարիների մէջ: Այսօր Անաստաս Ակաթողիկոսի գահակալման համար ընդունուած ժամանակագրութեան համաձայն, նա գահակալել է 661-667 թուականներին: իական է, սակայն, որ նախքան կաթողիկոս դառնալը Անաստաս Ակոռեցին երկար ժամանակ (652-659) վարել է կաթողիկոսարանի գործերը, Ներսէս Տայեցու ակամայ բացակայութիւնների տարիներին եղել է փաստական տեղապահ, նոյն Ներսէս Տայեցու կարգադրութեամբ հսկել է Զուարթնոց տաճարի շինարարութիւնը: Ինչ որ իմաստով՝ նա եղել է փաստական «աքոռակից կաքոռիկոս»: Այսինքն, սխալ չենք լինի, եթէ համարենք, որ Անաստաս Ակոռեցին փաստականօրէն կաթողիկոսական իշխանութիւն է ունեցել եւ կաթողիկոսել է հէնց 652ից, երբ Ներսէս Տայեցին քաշուած էր Տայքի իշխան գիւղը եւ չէր մասնակցում կաթողիկոսական իշխանութեանը<sup>5</sup>:

Միւս կողմից էլ այդ նոյն ժամանակներում ունենք մի շատ նշանակալի իրադարձութիւն՝ կապուած օրացոյցի հետ: Գիտենք, որ 665ին տեղի է ունեցել առաջին այսպէս կոչուած՝ «ծոազատիկը»: Մրա էութիւնն այն էր, որ մէկ շաբաթով իրարից տարբեր էին լինուած Հայոց եւ Ուղղափառ եկեղեցիների զատիկները: Հայոց Զատիկը այդ տարի եղել է Ապրիլի 13ին, իսկ արեւմտեան եկեղեցիների Զատիկը եղել էր դրանից մէկ շաբաթ առաջ՝ Ապրիլի 6ին: Հայոք դա համարել են սխալ Զատիկի, քանի որ այդպիսի տարիներին այդ ամսաթուով Զատիկը համընկնում էր Հրէից Պասեքի հետ, որով եւ ընկնում էր Նիկիայի ժողովի 318 հայրերի յատուկ նզովքի տակ: Ահա այս պատճառով էլ հայ իրականութեան մէջ դա համա-

5 Յովհաննէս կաքոռիկոսի Պատմութեան մէջ կայ. «Զկնի ապա մեծին ներսէի յաջորդէ զարդ հայրապետութեամբ Անաստաս՝ ի գեղշէն Ակոռոյ, որ ի Մասեաց ոտիմ: Սա սեմելապան լեալ մնձին ներսէսի՝ եւ վերակացու շինուածոյ հրաշակերտ եկեղեցւոյն (խօսքը Զուարթնոցի մասին է – Գ. Բ.) գտամեր հրամանաւ ներսէսի, մինչ էր նա ի հալածանս ի գաւառին Տայոց». ՅՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍՆԱԿԵՐՏՑԻ, Եշ. աշխ., 90:

րուել է «ծուռ» Զատիկ եւ կոչուել է «ծուազատիկ»։ Այսպիսի իրադարձութիւն տեղի էր ունենում 532 տարուայ մէջ 4 անգամ. առաջին Յը՝ 95ական տարի միջակայքով, վերջինը՝ 247 տարի անց։ Մըռուազատիկի «եիմքը դրուել էր» 561 թուականին, երբ Անդրէասի 200ամեայ զատկացուցակի աւարտից յետոյ իննամեայ օրացուցային խառնաշփութիւն աւարտին միաժամանակ երկու իրարամերժ օրացուցային կարգադրութիւններ էին արուել. մէկը՝ Աղեքսանդրիայում 36 տոմարագէտների մասնակցութեամբ եւ էաս Աղեքսանդրացու գլխաւորութեամբ, միւսը՝ կոստանդնուպոլապում։ Կայսեր պալատում ոմն իրիոնի կողմից։ Այս երկու օրացուցային կարգադրութիւններում էլ հիմք էր ընդունուած 532ամեայ պարբերաշընանը։ Սակայն ընդունուած էին վերադիրների տարբեր համակարգեր։ Եւ ահա, իրիոնեան (կոստանդնուպոլապեան) համակարգում վերադիրները լական փոքր էին աղեքսանդրեան վերադիրների համակարգից։ Եւ այս մէկով փոքր լինելն էլ բերում էր զատիկների վերոնշեալ տարբերութեանը։ Հայկական տօմարը իր վերադիրներով զուգահեռ է ընթացել աղեքսանդրեան համակարգի հետ։ Տարամիտումը եղել է միայն Յունական եւ Լատինական եկեղեցիների տօնացոյցի նկատմամբ։

Իր ժամանակի համար ծուազատիկը բացառիկ մեծ նշանակութեան իրադարձութիւն պիտի եղած լինի։ Եւ յատկապէս սա պիտի խթան եղած լինի կրօնական իշխանութիւններին՝ օրացոյցի հարցերով զբաղուելու համար։

Սրանից զատ կայ եւս մի օրացուցային խնդիր, որ ամենայն հաւանականութեամբ պիտի առաջացած լինի այս նոյն ժամանակներում։ Խօսքը Աթանաս Տարօնացու կազմած հայկական օրացոյցի մասին է։

Ինչպէս գիտենք, 552 թուականին, Մովսէս Եղիվարդեցի Կաթողիկոսի յանձնարարութեամբ, Աթանաս Տարօնացին ստեղծել էր առաջին ինքնուրոյն հայկական քրիստոնէական օրացոյց-զատկացուցակը<sup>6</sup>։ Թէ քանի տարիների համար է եղել այս զատկացուցակը, այժմ ստոյգ չգիտենք։ Արդի տոմարագիտական գրականութեան մէջ այս մասին եղել են տարբեր ենթադրութիւններ։ Աթանասից առաջ քրիստոնէական տօնների օրերը որոշելու համար եկեղեցին օդտապործում էր Անդրէաս Բիւզանդացու Տոմարը, որ պարունակում էր 200 տարիների զատկացուցակ՝ 353-552 թուականների համար։ Դրանից առաջ էլ տարբեր քրիստոնեայ համայնքներ կիրառել են

6 Մանրամասն պյա մասին տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, 61-96։

տարբեր զատկացուցակներ՝ կազմուած 95ական տարիների համար<sup>7</sup>: Աթանասի տոմարական ձեռնարկումից 9 տարի անց Աղեքսանդրիայում եւ Կոստանդնուպոլիսում եղան օրացուցային երկու կարգադրութիւններ, որոնցում որդեգրուեցին, կանոնականացուեցին 532ամեայ պարբերաշրջանի աղիւսակներ՝ որոշ տարբերութիւններով (տե՛ս վերը): Այսինքն, Աթանասի ձեռնարկումի ժամանակ Հայաստանում տակաւին ծանօթ չէին 532ամեայ պարբերաշրջանին, ուստի եւ Աթանասը չէր կարող ստեղծել զատկացուցակ 532 տարիների համար: Ի դէպ, հայ մատենագրութեան մէջ էլ այս 532ամեայ պարբերաշրջանի (որ յաճախ կոչուել է հինգհարիւրեակ) գիւտը վերագրուել է իաս Աղեքսանդրացուն, թէպէտ արտաքին աղբիւրներից գիտենք, որ Հռոմում կիրառութեան մէջ է դրուել իասից շուրջ հարիւր տարի առաջ Վիկտորիուս Աքուիտանացու կողմից:

Դառնալով Աթանասի ստեղծած զատկացուցակին, ստանում ենք, որ բացառելով 532ամեայ զատկացուցակի ստեղծումը, մնում է, որ նա ստեղծած լինէր կամ 200ամեայ զատկացուցակ, ինչպէս Անդրէասինն էր, կամ 95ամեայ զատկացուցակ, ինչպէս Անդրէասի նախորդներինն էր, եւ կամ էլ՝ աւելի փոքր տեղողութեամբ: 200ամեայ օրացոյց ստեղծելու հաւանականութիւնը շատ փոքր է, զի այդ ժամանակ առկայ էր օրացուցային խառնաշփոթ, որ առաջացել էր հէնց Անդրէասի 200ամեայ օրացոյցը աւարտուելու կապակցութեամբ եւ դրա բուն պատճառն էլ Անդրէասի զատկացուցակի հէնց 200ամեայ լինելն էր<sup>8</sup>: Այսինքն, որոշ իմաստով 200ամեակը պիտի «վարկարենկուած» լինէր: Ուրեմն, բացառելով 200ամեայ եւ 532ամեայ զատկացուցակների ստեղծումը, մենք ակամայ յանդում ենք նրան, որ Աթանասի ստեղծած հայկական առաջին օրացոյցը պիտի պարունակէր 95 տարիների զատկացուցակ: Արդ, եթէ հիմնուենք շատ մեծ հաւանականութեամբ՝ ճշմարտացի այս եղրակացութեան վրայ, կը ստանանք, որ Աթանասի զատկացուցակը պիտի աւարտուէր  $552+95=647$  թուականին: Բնականաբար, այս թուականից էլ պիտի առաջանար նոր զատկացուցակ կազմելու հարցը: Ստացւում է, որ մեր խնդրոյ առարկայ ժամանակներում տակաւին ծուազատիկից 18 տարի առաջ արդէն Հայոց Եկեղեցին պիտի առնչուած լի-

7 95ամեայ զատկացուցակը շատ յարմար էր նրանով, որ պարունակում էր 5 հատ 19ամեակ (95=5x19): Խակ Անդրէասի կազմած 200ամեակը վաս էր նրանով, որ դա պարունակում էր 10 հատ 19ամեակ եւ եւս 10 տարի, այսիմթե՛ վերջում լինում էր մի թերի 19երեակ (200=10x19+10): Ահա այս թերի 19ամեակն էլ պատճառ էր դարձել Անդրէասի 200եակի աւարտից յետոյ օրացուցային խառնաշփոթ առաջանալուն:

8 Տե՛ս Ախոյորդ ծանօթագրութիւնը:

նէր օրացուցային սուր խնդրի հետ։ Մեզ հասած պատմագրական եւ տոմարական սկզբնալըիւրներում չկայ որեւէ յիշատակութիւն այս ժամանակներում օրացուցային կարգադրութիւն եղած լինելու մասին։ Աւելին. այդպիսի վկայութիւն ակնկալելու հիմքեր եւս չունենք, զի քաղաքական առումով սրանք շատ խարը, յուզումնալից տարիներ են եղել։ Այս տարիներին Հայաստանում արաբական առաջին արշաւանքներից տուժած երկիրը վերականգնելու, կայուն կենսունակ իշխանութիւն ստեղծելու փորձեր էին անում Թէոդորոս Ռշտունին եւ մի քանի այլ իշխաններ։ Ընդ որում, այդ փորձերը ոչ միշտ էին յաջող ելք ունենում։ 649ին Բիւզանդացիների կողմից լինում է դաւանափոխութեան նոր առաջարկ, որին ի պատասխան գումարում է յատուկ ժողով Դուինում Ներսէս Տայեցու եւ Թէոդորոս Ռշտունու գլխաւորութեամբ։ 650ին լինում է մի նոր արաբական արշաւանք, որին պատշաճ դիմադրութիւն կազմակերպել չեն կարողանում ոչ Հայերը, եւ ոչ էլ Բիւզանդացիք։ Սրանից յետոյ 652ին Թէոդորոս Ռշտունու եւ Արաբների Մոււակիս կուսակալի միշեւ կնքում է առաջին հայ-արաբական պայմանագիրը, որով Հայաստանը քաղաքականապէս ընդունում է արաբական գերիշխանութիւն, պահպաննելով ներքին ինքնուրոյնութիւնը։ Երկիրը 15 տարով ազատում է հարկերից։ Ակաւում է համեմատաբար խաղաղ մի կարճ ժամանակամիջոց։ Այսինքն, մինչեւ 652 թուականը խօսել օրացուցային խնդիրների կարգաւորման մասին չենք կարող պայմանները եղել են յոյժ աննպաստ։ Ուրեմն, հայ հոգեւոր իշխանութիւնը տոմարի կարգադրութեանը պիտի կարողանար անդրադառնալ 652ից ոչ շուտ։

Ահա այս հենքի վրայ նայենք Անանիայի կենսագրութեան ու գործունէութեան մի քանի կէտեր։

Ինչպէս ժամանակին ցոյց է տրուել, Անանիան իր յայտնի յիշատակարանում տեղեկացնում է, որ ինքը Հայաստան է եկել Փրկչի 666 թուականին<sup>10</sup>։ Առաջիկայ շարադրանքի ամբողջութեան համար նպատակայարմար է աստ կրկնել այդ յիշատակարանի բացատրութիւնը եւ կատարել որոշ լրացում։ Այսպէս իր գրած յիշատակարանում Անանիա Շիրակունին, խօսելով իր՝ Հայաստան գալու եւ իր

9 Այս ընթացքում ասպետ Վարազտիրոց Բագրատունին կարողանում է կոստանդնուպոլիսից փախչել Տայք, որտեղ եւ մահանում է խորհրդաւոր պայմաններում, իսկ Թէոդորոս Ռշտունին, Հայոց իշխան դառնալուց յետոյ, ձերքակալում է, տարւում կոստանդնուպոլիս, ապա ևս դառնում 649ի։ Մանրամասն այս ժամանակների անցուդարձի մասին տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, Խո. Բ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան 1984, 308-314։

10 ԲՐՈՒՏԵՍՆ, Գ., Քրիստոսի ծմբեան թուականը ըստ Հայ մատենագրական աւամդոյրի, ի էջմիածին, 1998, Ե., 73-88։

ուսանած գիտութիւնը «ի Քրիստոսասէր վիճակն սրբյն Գրիգորի» բերելու մասին, տալիս է դրա ժամանակը. «Եւ սկիզբն քանիաւնութեան թերման թուխ յորժամ լցեալ էր ՈԿԸ [ա]մ ի կուսական յարգանդէ Աստուածն քանի: Եւ ի մնատասաներորդի շրջագայութեանն և ի ժԹ ամի [կոս]տանդիանոսի»<sup>11</sup>: Այստեղ Քրիստոսի ծննդեան ժամանակը տրուած է իւրօրինակ կերպով. «յորժամ լցեալ էր ՈԿԸ (668) ամ...», այսինքն, լրացել էր 668 տարին: Հետեւաբար, խօսքը վերաբերում է 669րդ տարուան: Ուրեմն, պէտք է վերցնել ոչ թէ 668, այլ 669 տարի: Սոյն յիշատակարանում ժամանակը տրուած է երեք կերպ. Կոստանդիանոսի 19րդ տարի = Քրիստոսի ծննդեան 669 թիւը = ինչ որ պարբերաշրջանի 11րդ տարին: Յատուկ նշուած չէ, թէ ինչ պարբերաշրջան է նկատի առնուած: Ուրեմն, դա պէտք է լինի ամենասովորական, ամենակիրառական պարբերաշրջանը, որ է Լուսնի՝ քաջ յայտնի 19ամեայ շրջանը (Մեթոնի շրջանը): Այսինքն, խօսքը 19երեակի 11րդ տարուայ մասին է: Ինչպէս գիտենք, Անանիան կիրառել է Անդրէասի 19երեակը, որի առաջին լրումը եղել է Ապրիլի 4ին (վերադիրը՝ ըստ Անանիայի՝ 9)<sup>12</sup>: Մերձակայ տարիներից 19երեակի սկիզբ է Հայոց ՃԵ (105) տարին, որի վերադիրը Թ(9) է, եւ Լուսնի զատկական լրումն էլ՝ Ապրիլի Դ(4)ին<sup>13</sup>: Հաշուելով Հայոց 105ը 19երեակի առաջին տարի, այդ նոյն 19երեակի 11րդ տարին կը լինի Հայոց 115 թիւը (վերադիրը՝ 30, աւագ լրումը՝ Ապրիլի 13ին, Զատիկը՝ Ապրիլի 18ին): Աթանաս Տարօնացու սկսած թուահաշուով Հայոց 115 թիւը = Փրկչի 666 թուականի Յունիսի 13ից մինչեւ 667 Յունիսի 12ը (Նաւասարդի 1ից մինչ աւելեաց 5րդ օրը): Այդ միջակայքի (որով եւ՝ Հայոց այդ տարուայ) Զատիկն էլ 667 Ապրիլի 18ին է:

Սրանով որոշում է Անանիայի Հայաստան գալու ժամանակը: Քանի որ նա խօսում է Քրիստոսի ծնունդից 668 տարի անցած լինելու մասին, ուրեմն, այդ ժամանակ տակաւին լրացած չի եղել Քրիստոսի ծննդեան 669 տարին, ըստ իր հաշուի: Անանիայի տարբեր աշխատութիւններում առկայ տուեալների հիման վրայ գիտենք, որ նա Քրիստոսի ծնունդը դրել է ն.ք. 3 թուականի Յունուարի 6ին<sup>14</sup>:

11 Ա.ՆԱ.ՆԻԱ. ՇԻՐԱԿՈՒՆԻ, Մատենագրութիւնք, ՀՍՍՌ Մատենադարանի հրատ., Երևան 1943, 236:

12 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Անանիա Շիրակունու ԾՂԲ բոլորակը ըստ հայերէն հեագոյն թղթեայ ձեռագրի, ի Էջմիածին, 1998, Ա., 125-143, 140-141: Տե՛ս նաև Գրիգոր ԲՐՈՒՏԵԱՆ, Անանիա Շիրակացու «Խառնախորանը», Մայր Արքու Ս. Էջմիածին, 1998, 57:

13 Տե՛ս, օրինակ, Ա.ՆԱ.ՆԻԱ. ՇԻՐԱԿՈՒՆԻ, Մատենագրութիւնք, Աշ. աշխ., 267:

14 Աւելի մանրամասն այս մասին տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Քրիստոսի ծննդեան թուականը ըստ Հայ մատենագրական անույթի, ի Էջմիածին, 1998, Ե., 45-53:

Ուրեմն, խօսքը վերաբերում է 667 Յունուարի ճին նախորդող ժամանակին: Ըստ այսմ էլ՝ կ'ունենանք, որ ըստ այս յիշատակարանի Անանիայի Հայաստան գալու ժամանակն է 666 Յունիսի 13ից 667 Յունուարի ճի միջակայքը:

Ի դէպ, սրանով մի անկախ ճանապարհով եւս որոշւում է, որ Անանիան Քրիստոսի ծնունդը դրել է ն.թ. 3 թուականին: Այսպէս. այս միջակայքի Յայտնութեան օրը 667 Յունուարի ճն է: Սրանից էլ 669 տարի ետ հաշուելով կը գանք ն.թ. 3 թուին (ն.թ. 3 + 667 - 1 տարի = 669 տարի):

Գալով բիւզանդական կայսեր տարիներին, այստեղ անկասկած ինչ որ շփոթ կայ: Նշուած ժամանակներում իրար ետեւից իշխել են համարեա' անուանակից երկու կայսրեր՝ Կոստաս Բ. (կամ Կոնստանդ Բ.)՝ 642-668 (ըստ որոշ աղքիւրների՝ 641ից), եւ ապա՝ Կոստանդին Դ.՝ 668-685: Կոստանդին Դ.ի տարիները սկսում են աստ նշուած՝ Քրիստոսի 667ից յետոյ, որով եւ սա ընդունելի չէ: Ուրեմն, խօսքը Կոնստանդ Բ.ի մասին է: Սրա էլ 19րդ տարին կը լինի 659 կամ 660 Փրկչական թիւը (նայած՝ սկիզբը 641ից է հաշուելում, թէ՝ 642ից): Այս թուերից եւ ոչ մէկը մեր թուականի հետ չի համընկնում: Ուրեմն, այստեղ ինչ որ աղաւաղում կայ: 666ը այս կայսեր 25րդ, կամ 26րդ տարին է, որով եւ հայերէն գրութեամբ պիտի լինէր ինք., կամ իջ.: Սրանք էլ առանձնապէս յարմար չեն՝ աղաւաղուելով ժթ. (19) դառնալու համար:

Այս կարգի աղաւաղումը չէր կարող առաջացած լինել գրչական շփոթութիւնից, տառերի նմանութիւնից: Շատ հաւանական է, որ այստեղ ունենք պարզապէս բացթողում եւ դրա հետեւանքով առաջացած աղաւաղում: Այսպէս. վկայաբերուած հատուածում «Եւ ի մետասաներորդի շրջագայութեանն եւ ի ժթ. ամի կոսյտանդիանոսի» 19երեակի 11րդ տարուց անմիջապէս յետոյ խօսում է Կոստանդիանոսի թուականի մասին: Եթէ այդ երկու տեղեկութիւնների արանքից հանենք գծիկը եւ «ի» նախդիրը, այդ դէպքում ժթ. (19)ը կարող է վերաբերել արդէն ոչ թէ Կոստանդիանոսին, այլ «շրջագայութեանը», այսինքն՝ այն պարբերաշրջանին, որի տարին որ նշուած է: Սա շատ լաւ կը ներդաշնակի այն իրողութեան հետ, որ այստեղ իրօք օգտագործուած է 19ամենայ պարբերաշրջանը (որ սակայն չի նշուած): Այսինքն, մի կողմից կը լրացուի կիրառուած պարբերաշրջանի անունը, միւս կողմից Կոստանդիանոսը «կ'ազատուի» իրեն չվերաբերող տարիներից: Աւելին. այս պարագայում հնարաւոր է նաեւ ժթ. թուականից առաջ եղած «ի» նախդիրը մեկնարանել իրեւ հէնց Կոստանդիանոսի տարիները ցուցանող թուի սկզբի

մասը (իբրեւ իԵ·, կամ իԶ·), որ աղաւաղման հետեւանքով խախտուել է իր տեղից եւ յայտնուել է «ԺԹ.»ից յետոյ: Այսպէս թէ այնպէս, մենք այս տեղում ունենք բնագրի ակնյայտ աղաւաղում: Ասու առաջարկուած տարբերակով նուազագոյն փոփոխութեամբ բոլոր անհամաձայնութիւնները շտկուում են: Եթէ ճիշտ է առաջարկուած շտկումը, ապա խնդրոյ առարկայ հատուածը կարելի կը լինի վերականգնել հետեւեալ կերպ: «Եւ ի մետասաներորդի շրջագայութեանն ԺԹ[երեակի,] Խ[Ե] (կամ Խ[Զ]) ամի [Կոս]տանդիանոսի»: Ուրեմն, կարող ենք շատ հաւանական համարել, որ Անանիայի յիշատակարանի բնագրում պիտի եղած լինի 19(ԺԹ)երեակի 11րդ տարին եւ կոստանդիանոսի իԵ (25) կամ իԶ (26)րդ տարին, որով սոյն յիշատակարանի երեք թուականները կը դառնան լիովին ինքնահամաձայնեցուած: Այսպէս թէ այնպէս՝ Շիրակունու այս յիշատակարանի վերլուծութեամբ ճշգրտուում, հաստատուում է նրա Հայաստան գալու ժամանակը՝ 666ի երկրորդ կիսամեակը:

Մի այլ թուական էլ բխում է այս նոյն տուեալից: Քանի որ ըստ Անանիայի ինքնակենսագրութեան նա Տրապիզոնում ուսանել է 8 տարի, ուրեմն, նա ուսման մեկնած պիտի լինի 666–8 = 658 թուականին: Նոյն ինքնակենսագրութիւնից իմանում ենք նաեւ, որ Տրապիզոն մեկնելուց առաջ՝ Հայաստանում իր լրիւ ուսումն աւարտելուց յետոյ Անանիան կէս տարի սովորել է Չորրորդ Հայքում Քրիստոսատուրի մօտ, իսկ մինչ այդ էլ, ուսուցիչ որոնելով, եղել է կարինում (Թէոդոսուապոլիս) Եղիազարոսի մօտ<sup>15</sup>: Ընդ որում, ըստ Անանիայի նշման՝ նոր ուսուցչի որոնումները նա սկսել է տեղում իր ուսումն աւարտելուց անմիջապէս յետոյ: Նշանակում է՝ Անանիայի՝ հայաստանեան ուսումնառութեան աւարտի եւ նոր ուսուցչի որոնումների սկզբի միջեւ ժամանակամիջոց չկայ: Դրանք իրար յաջորդում են անմիջականօրէն: Անանիան չի նշում իր հայաստանեան դեգերումների ամբողջ ուղին: Նա տալիս է միայն այն վայրերի անունները, որտեղ ինքը առնչուել է իր նպատակի համար կարեւոր անձանց հետ: Բնականաբար, նա պիտի եղած լինէր այլ վայրերում եւս: Շիրակից (որ Անանիայի ծննդավայրն էր եւ, ամենայն հաւանականութեամբ՝ նախնական կրթութիւն ստանալու վայրը) կարին, ապա՝ Չորրորդ Հայք ճամբորդելը, անշուշտ, որոշ ժամանակ պիտի խէրէ: Հարկ է սրան յաւելել նաեւ այլ վայրերում ուսուցիչ ու դա-

15 Ի դեպ, հետաքրքիր է, որ Անանիան չի յայտնում, թէ ո՞վ է իրեն տեղեկացրել սոյն Եղիազարոսի մասին, մինչդեռ Չորրորդ Հայքում բնակուող Քրիստոնատուրի մասին գրում է, որ Եղիազարոսն է իրեն յայտնել այս ուսուցչի մասին: Սա մտածել է տալիս, որ միգուցէ Անանիան չի կամեցել յայտնել այս Եղիազարոսի «հասցեն» իրեն տուողի անունը:

սագիրք որոնելու ժամանակը, որի մասի Անանիան չի նշում: Զորյացը Հայքում Քրիստոսառուրի մօտ վեցամսեայ ուսման հետ միասին այս դեգերումների ժամանակը կարելի է գնահատել շուրջ մէկ տարի: Այսինքն, Հայաստանում ուսումն աւարտելուց յետոյ Անանիան պիտի շուրջ մէկ տարի որոնումների մէջ եղած լինէր նախքան Տրապիզոն հասնելը: Ուրեմն, Անանիայի հայաստանեան ուսումնառութեան աւարտը պիտի լինի մօտ 657ին:

Ի մի բերելով Աթանասի զատկացուցակի աւարտման, ծռագատիկի, Անանիայի ուսման մեկնելու եւ Հայաստան վերադառնալու եւ Անաստաս Ակոռեցու տարիները, ստանում ենք այսպիսի պատկեր.

647ին աւարտւում է Աթանաս Տարօնացու կազմած 95ամեայ զատկացուցակը: Առաջ է գալիս նոր տոմար, զատկացուցակ կազմելու խնդիր:

652-659ին քաղաքական խառնակ իրավիճակում Ներսէս Տայեցի կաթողիկոսը հեռանում է կաթողիկոսարանից եւ գնում Տայքի Իշխան գիւղը. Հայրապետանոցի գործերը վարում է Անաստաս Ակոռեցին:

657ին Անանիան աւարտում է իր ուսումը Հայաստանում եւ սկսում նոր ուսուցչի որոնումները նախ Հայաստանի արեւելեան մասում ապա՝ Հայաստանի յունական մասում եւ ի վերջոյ՝ բուն Բիւզանդական պետութեան սահմաններում:

658ին Կնքուում է Հայ-արաբական պայմանագիրը եւ սկսում է համեմատաբար խաղաղ մի շրջան:

658ին Անանիա Շիրակունին մեկնում է Տրապիզոն՝ Տիւքիկոսի դպրոցում ուսանելու:

661ին մահանում է Ներսէս Տայեցին եւ կաթողիկոսական աթոռին նրան յաջորդում է Անաստաս Ակոռեցին:

665ին լինում է առաջին ծռագատիկը:

666ին Անանիան վերադառնում է Հայաստան եւ պատուէր է ստանում կաթողիկոս Անաստաս Ակոռեցուց՝ շարադրել Քննիկոնը ու դրա մէջ՝ Հայոց օրացոյցը: Անանիան կատարում է կաթողիկոսի պատուէրը:

667ին մահանում է Անաստաս Ակոռեցի կաթողիկոսը՝ Հասցնելով եպիսկոպոսական ժողովով վաւերացնել-հաստատել Քննիկոնը իբրեւ դպրոցական ծրագիր ու ձեռնարկ:

667ին կաթողիկոս է ձեռնադրուում Խորայէլ Ոթմսեցին, եւ Քննիկոնի հաստատման գործը հանւում է օրակարգից:

իրար համադրելով այս թուականներն ու իրադարձութիւնները, տեսնում ենք, որ առկայ է իրադարձութիւնների եւ ժամանակների միջեւ «տարօրինակ» գուգադիպութիւն: Յատկապէս ակնառու է Անանիայի ուսման մեկնելու եւ վերադառնալու ժամանակների առնչութիւնը Հայ Եկեղեցու համար յոյժ նշանակալի տոմարական իրադարձութիւնների հետ: Անանիայի մեկնումը յաջորդում է Աթանասի տոմարի աւարտին (10 տարի յապաղումով), իսկ Անանիայի վերադարձն էլ անմիջապէս յաջորդում է առաջին ծռազատիկին: Եւ երկուսն էլ տեղի են ունեցել այն ժամանակ, երբ կաթողիկոսական իշխանութիւնը պատկանել է Անաստաս Ակոռեցուն. առաջինը եղել է, երբ նա փոխարինում էր Ներսէս Տայեցուն, իսկ երկրորդը եղել է, երբ նա արդէն Կաթողիկոս էր: Այստեղ վերը նշուած 10ամեան յապաղման մասին հարկ է նկատել հետեւեալը: Թէպէտ, իրօք, առկայ է 10ամեայ յապաղում, սակայն այս պարագայում էլ «զարմանալի գուգադիպութիւն» է այն, որ Անանիայի ուսման մեկնելը տեղի է ունեցել տոմարի խնդիրն առաջանալուց յետոյ առաջին իսկ յարմար ժամանակին՝ հէնց հայ-արաբական խաղաղութեան պայմանագիր կընքուելու տարում:

Շատ քիչ հաւանական է, որ Հայկական օրացոցի համար վճռորոշ այս իրադարձութիւնների եւ Անանիայի կենսագրութեան անկիւնադարձային հանգրուանների միջեւ դիտուող առնչութիւնը արդիւնք լինի պատահական գուգադիպութեան: Բնական է ընդունել, որ այս իրադարձութիւնների միջեւ առկայ է պատճառական կապ:

Պակաս կարեւոր չէ նաեւ Անանիա Անեցու եւ Անաստաս Ակոռեցու յարաբերութիւնների հարցը: Այսօր մենք չունենք ուղղակի վկայութիւններ այդ յարաբերութիւնների բնոյթի, դրանց սկզբնաւորման եւ ընթացքի մասին: Սակայն Անանիայի ինքնակենսագրութեան մէջ կան տեղեկութիւններ, որ հնարաւորութիւն են տալիս գոնէ որոշ գաղափար կազմել այդ մասին: Այսպէս. Անանիայի ինքնակենսագրութեան մէջ կայ. «...Եւ վասն զի ոչ գտանէր յաշխարհիս Հայոց մարդ ո՛ք, որ գիտէր իմաստափրութիւնն, այլ եւ ոչ անգամ գիրք արուեստից ուրեմ գտանէին: Ապա եւ ի Յունացն դիմեցի յաշխարհ»<sup>16</sup>: Այստեղ հեղինակը «գիրք արուեստից» գրելով ի նկատի ունի մաթեմատիկային եւ առհասարակ՝ քառեակ գիտութիւններին<sup>17</sup> վերաբե-

16 ԱՆԱՆԻԱԾԻ ՇԽՐԱԿՈՒՆԻ, Մատենագրութիւնք, Յշ. աշխ., 206-207:

17 Խնդրոյ առարկայ ժամանակներում ընդունուած տարարաժամամբ ժառանակ գիտութիւնների մէջ էին համարողութեան արուեստը (մաթեմատիկան – բուարանութիւնն ու հանրահաշիւը), երկրաշափութիւնը, երաժշգ

ըող գրականութիւն։ Իսկ «իմաստասիրութիւնն» ասելով էլ ի նկատի ունի հէնց քառեակ գիտութիւնները (գուցէ՝ եռեակի հետ միասին)։ Այսինքն, Անանիան յայտնում է, որ իր որոնումների ժամանակ Հայաստանում չի եղել ոչ միայն քառեակ գիտութիւնների մասնագէտ, այլ նաեւ՝ գիրք՝ դասագիրք։ Ի՞նչ է սա նշանակում։ Այսպիսի յայտարարութիւն Անանիայի պէս լուրջ մարդը կարող էր անել միմիայն խորապէս վստահ լինելով, որ իր գրածը հաստատապէս ճիշտ է։ Իսկ դրա համար էլ հարկ պիտի լինէր ստուգել Հայաստանի բոլոր մատենադարանները, կամ գոնէ՝ դրանցից առաւել մեծերն ու հարուստները։ Այսինքն, Անանիայի այս յայտարարութիւնից հետեւում է, որ նախքան Ցունաց կողմերը մեկնելը նա պիտի լրիւ նայած, ստուգած լինէր Հայաստանի բոլոր նշանակալի մատենադարանները։ Իսկ Հայաստանի մատենադարանների մէջ ամենամեծն ու հարուստը, բնական է, պիտի լինէր կաթողիկոսարանի մատենադարանը։ Ուրեմն, Անանիան չէր կարող շրջանցել կաթողիկոսարանի մատենադարանը։ Այսինքն, սա նշանակում է, որ դասագիրք եւ ուսուցիչ որոնելիս Անանիան անպայման պիտի գնացած լինէր կաթողիկոսարան, իրեն հետաքրքրող գրքերը գտնելու յոյսով։ Իսկ կաթողիկոսարանի բարձրագոյն պատենադարանում գրքեր որոնելու արտօնութիւն ստանալն էլ, շատ մեծ հաւանականութեամբ, նրան պիտի առնչէր բարձրագոյն պատասխանատու անձի հետ<sup>18</sup>։ 657-658ին, երբ Անանիան իր որոնումներն էր անում, Ամենայն Հայոց կաթողիկոսարանի բարձրագոյն պատասխանատու անձը Անաստաս Ակոռեցին էր։ Այսպէս ստանում ենք, որ շատ մեծ հաւանականութեամբ Հայաստանում իր ուսումն աւարտելուց յետոյ նոր ուսուցչի եւ դասագրքի որոնումների ընթացքում Անանիան պիտի այցելած լինէր կաթողիկոսարան եւ հանդիպած լինէր Անաստաս Ակոռեցուն։ Արդ, եթէ յիշենք, որ դրանից 10 տարի առաջ աւարտուել էր Աթանասի զատկացուցակը, եւ կաթողիկոսական տեղապահ Անաստաս Ակոռեցին վստահաբար գիտէր տոմարական խնդրի մասին, կարելի է պատկերացնել, թէ ինչքա՞ն պիտի ուրախանար Անաստասը, տեսնելով մի ուսումնատենչ երիտասարդի, որ ճգտում է սովորել հէնց

տուրիւնը եւ աստղագիտուրիւնը։ Ենեակ գիտուրիւններն էլ ընդգրկում են ֆերողական արուեստը (ֆերականութիւնը), նարտասանութիւնը եւ դիակելիտիկան կամ տրամարանութիւնը։ Այս եօթ գիտուրիւնները միասին եղել են ժամանակի գիտա-կրթական համակարգի հիմքը։

18 Այստեղ էական է, որ Անանիայի որոնած գրքերը սովորական «լայն պահանջարկ ունեցող» գրականութեան ցանկից դուրս էին (այդպիսի գրքեր Հայաստանում պարզապէս չեն եղել)։ Սա եւս պիտի բարձրագոյն հոգեւոր իշխանութիւնների ուշադրութիւնը սեւեռէր եզակի հետաքրքութիւններով այս երիտասարդի վրայ։

այն, ինչ անհրաժեշտ է տուեալ պահին Հայոց Եկեղեցուն։ Զի բացառուում, որ հենց նա էլ Անանիային յայտնած լինի Կարինում բնակուող Եղիազարոսի մասին եւ խորհուրդ տուած լինի ուսման մեկնել Յունաց կողմերը<sup>19</sup>։

Այստեղ տեղին է անդրադառնալ նաեւ Անանիայի ուսման համար վճարումների հարցին։ Տիւքիկոսի դպրոցում, ինչպէս յայտնում է Անանիան, ուսանում էին Կոստանդնուպոլսի Պատրիարքի ուղարկած սաները։ Սա նշանակում է, որ դա պիտի լինէր շատ թանկ վճարուող դպրոց։ Նոյնն է ցուցանում եւ Անանիայի մէկ այլ վկայութիւնը Տիւքիկոսի անձնական գրադարանի մասին։ Անանիան յայտնում է, որ «չկար մի գիրք, որ նրա գրադարանում չինէր»։ Նկատի ունենալով ժամանակի գիտութիւնը, սա նշանակում է մօտ 500–1000 կտոր գրականութիւն պարունակող մատենադարան։ Այսպիսի գրադարանը շատ մեծ հարստութիւն էր։ Տիւքիկոսի մասին Անանիան յայտնում է նաեւ, որ Անտիոքի մօտ եղած ճակատամարտում նա կորցրել էր իր ողջ ունեցուածքը։ Ուրեմն, այս ամբողջ հարուստ գրադարանը նա պիտի հաւաքած լինէր կեանքի երկրորդ կէսում՝ գիտութեամբ ու դասաւանդմամբ զբաղուելով։ Եւ սա էլ, իր հերթին, վկայութիւն է առ այն, որ նրա դպրոցում ուսման վարձերը պիտի շատ բարձր լինէին։ Անանիան ոչինչ չի գրում անվճար սովորելու մասին։ Նշանակում է, նա լրիւ վճարել է իր ուսման վարձը։ Իսկ ո՞վ պիտի կարողանար վճարել Անանիայի համար ուսման բարձր վարձը։ Անշուշտ, Անանիան ազնուականի որդի էր (ըստ իր հաղորդման, նրա հայրը եղել է Յովհաննէս Շիրակունին)։ Մակայն նա բնաւ մեծ նախարարի, կամ հզօր ազնուականի զաւակ չէր։ Նրա հօր՝ Շիրակունի տոհմի մասին այլուստ ոչինչ յայտնի չէ։ Ուրեմն, Յովհաննէս Շիրակունին պիտի եղած լինի համեստ ունեցուածքի տէր մի «մանր» ազնուական։ Եւ դժուար է պատկերացնել, որ այս համեստ ազնուականը ի զօրու լինէր վճարել իր որդու կեցութեան եւ ուսման ութամեայ ծախսը Հայաստանից դուրս՝ Տիւքիկոսի թանկ դպրոցում։ Ահա սա յուշում է, որ այս երիտասարդ ուսմանողի թիկունքում պիտի եղած լինի մի հզօր հովանաւոր, եւ ամենալաւ «քեկնածուն» այս դերի համար Անաստաս Ակոռեցին է։

Եթէ ընդունենք, որ նշուած իրադարձութիւնները ունեն պատճառական կապ, կը ստանաք պատճառականօրէն իրար շաղկապուած իրադարձութիւնների եւ դրանց ժամանակների հետեւալ յաջորդական շղթան։

19 Այս առքիւ յիշելի է, որ Անաստասը սերտ գործակիցն էր Ներսէս Տայեցու, որի մասին էլ գիտենք, որ ստացել էր յունական փայլուն կրթութիւն։

647ին աւարտում է Աթանասի տոմարը: Առաջ է գալիս նոր տօնացոյց ստեղծելու խնդիր: Քաղաքական շատ բարդ պայմաններում կաթողիկոս Ներսէս Տայեցին ի վիճակի չի լինում խնդիրը շուտափոյթ լուծել: 652ին Յունաց Կայսրը գալիս է Հայաստան եւ Ներսէս Տայեցուն պարտադրում դաւանական զիջումներ: Քիչ անց, Հայոց իշխան Թէոդորոս Ռշտունու հետ ունեցած լուրջ տարածայնութիւնների հետեւանքով Ներսէս կաթողիկոսը քաշւում է իշխանութիւնից, հեռանում Տայք իր հայրենի իշխան գիւղը<sup>20</sup>: Կաթողիկոսարանի գործերը վարում է Անաստաս Ակոռեցին մինչեւ 659 թուականը: 657ին Անանիան աւարտում է իր ուսումը Հայաստանում եւ սկսում իր գեգերումները՝ նոր ուսուցիչ գտնելու համար: Այս ընթացքում նա (ամենայն հաւանականութեամբ) լինում է կաթողիկոսարանում, հանդիպում Անաստաս Ակոռեցուն եւ հայաստանեան ուսումն աւարտելուց մէկ տարի անց՝ 658ին Անաստաս Ակոռեցին Անանիային ուղարկում է Տրապիզոնում ուսանելու:

659ին տեղի է ունենում առաջին ծուազատիկը: Սա շատ լուրջ իրադարձութիւն էր, եւ արդէն կաթողիկոս դարձած Անաստաս Ակոռեցին Անանիային ետ է կանչում հրատապ դարձած տոմարական խնդիրները լուծելու: Ենթին Անանիան վերադառնում է Հայաստան եւ անմիջապէս կաթողիկոսի պատուէրով ձեռնամուխ լինում նոր ծրագրով ուսումնական ձեռնարկի ստեղծմանը: Շարադրում է Քննիկոնը, որի մէջ քառեակ ու եռեակ գիտութիւններից զատ յատուկ պատկառելի տեղ ունէր նաեւ Տոմարը: Այս կոթողային երկի մէջ Անանիան մանրամասն ներկայացրել է Հայոց եւ միւս 14 քրիստոնեայ ազգերի օրացոյցները, տուել դրանց զուգադրման աղիւսակներ, կազմել 532 տարիների զատկացուցակ հայկական ու հռոմէական ամսաթուերով Փրկչ. 580-1112 թուականների համար, տուել տարրեր օժանդակ աղիւսակներ՝ կամայական օրուայ աւուր պատկերը, երկնքում Լուսնի դիրքը եւ փուլը, Արեւի դիրքը, գիշերուայ եւ ցերեկուայ տեւողութիւնները գտնելու համար: Անանիան նաեւ տեսական մաս է շարադրել, որում, ի պատասխան կաթողիկոսի հարցումին, մանրամասն տեսականորէն բացատրել եւ հիմնաւորել է Ցայտնութիւնը եւ Զատիկը տօնելու ժամանակային այն կարգը, որ կիրառում էր Հայոց Եկեղեցին եւ որով Հայ Եկեղեցին սկզբունքօրէն տարբերում էր Յունական եւ միւս Եկեղեցիներից:

20 «Եւ ապա ըստ հապենապ տալոյ խնդրակաց ի կոտանդնուպոլսէ՝ գնայ Կայսըն փութանակի. իսկ հայապետն Ներսէս երկուցեալ իմն ի սաստիկ ցամանէն Ռշտունեաց տեսանը՝ երթեալ դադարէր ի Տայս», ՅՈՎՀԱՆՆԵՍ ԴՐՍ. ՄԽԱՆԱԿԵՐՏՑԻ, Աշ. աշխ., 87:

Անանիայի այս տեսական շարադրանքը մեզ է հասել հատուածաբար. դրա յայտնի մասերն են Անանիայի Յայտնութեան եւ Զատկի ճառերը:

Քննիկոնը շատ նշանակալի ձեռնարկ էր, եւ այն շարադրելուց զատ հարկ էր յատուկ եպիսկոպոսական ժողովով հաստատել այն՝ իբրեւ բարձրագոյն դպրոցի ուսումնական ծրագիր ու ձեռնարկ: Ահա այս է, որ Անաստաս Կաթողիկոսը չի հասցնում անել. վերահաս մահը անկատար է թողնում լուսամիտ Կաթողիկոսի մեծ ձեռնարկումը: Նրան յաջորդողները բոլորովին այլ աշխարհայեացքի տէր են լինում, եւ նրանց համար Անանիայի ստեղծած նոր ծրագիրն ու ձեռնարկը լինում են աւելորդ: Յովհաննէս Դրասխանակերտցի Կաթողիկոս պատմիչը այս մասին շատ մեղմ է արտայայտուել: «Անփոյթ զկնի եկեղոցն այսմիկ արարեալ...», գրում է նա: Սակայն յաջորդները «անփոյթ» չեն եղել Անաստաս Հայրապետի եւ Մեծն Անանիայի ձեռնարկումի նկատմամբ: Շուրջ չորս դար յետոյ Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու գրած նամակից տեղեկանում ենք, որ Անանիայի Քննիկոնը կաթողիկոսարանի դիւանում պահուել է փակի տակ, իբր «խրքին» լինելու պատճառաբանութեամբ<sup>21</sup>: Այսինքն, Անաստասի յաջորդները շատ լաւ իմացել են Անաստաս Ակոռեցու, Անանիայի եւ Քննիկոնի մասին: Եւ ոչ թէ «անփոյթ» են եղել, այլ արգելել են Անաստասի եւ Անանիայի նորամուծութիւնը: Այսինքն, այս պարագայում ունենք տարբեր (որոշ առումով՝ իրար հակառակ) աշխարհայեացքների տէր գահակալների յաջորդում ի դէմս մի կողմից՝ Ներսէս Տայեցու եւ Անաստաս Ակոռեցու եւ միւս կողմից՝ նրանց յաջորդած գահակալների:

Այստեղ առաջ է գալիս մի անհամաձայնութիւն վերը ներկայացուած պատկերի եւ Անանիայի ինքնակենսագրութեան միջեւ: Անանիան իր ինքնակենսագրութեան մէջ գրում է. «Եւ արդ՝ ես տրուապ Հայաստանեաց ուսայ ի նմանէ զիզաւը արուեստս զայս, որ քագաւորաց է ցանկալի եւ քերի յաշխարհս մեր՝ առանց ուրուք լինելոյ ձեռնուու, միայն ջանիւ իմոյ անձինս, աւգնականութեամբ աղաւրից սրբոյն Գրիգորի, թէպէտ եւ ոչ ոք եղեւ շնորհակալ եւ մեծարաւլ իմոյ աշխատութեան, քանզի եւ ոչ սիրաւ իսկ է ազգ մեր իմաստից եւ գիտուրեանց, այլ ծոյլք են եւ ճանձրացողք»<sup>22</sup>: Այստեղ Անանիան յստակ գրում է, որ ինքը ուսանել է եւ Հայաստան բերել իր գիտութիւնը («միայն ջանիւ իմոյ անձինս»): Սա լրիւ հակառակ է այն պատկե-

21 ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., Գրիգոր Մագիստրոսը եւ Անանիա Շիրակացու «ՔՅՈՒ-կո՞Ծ», Բանքեր Մատենադարանի, թլ16, 1994, 16-30:

22 ԱՆԱՆԻԱ. ՇԻՐԱԿՈՒՆԻ, Մատենագրութիւնն, թ2. աշխ., 208-209:

րին, որ ստացանք մեր քննութեամբ: Սակայն Անանիայի այս նոյն գրուածքում եւ հէնց նոյն հատուածում առկայ է նաեւ շատ աւելի լուրջ շեղում իրականութիւնից: Ինչպէս վերը տեսանք, մեր երկու հաւաստի պատմիչները՝ Ասողիկն ու Յովհաննէս Կաթողիկոսը միաձայն պնդում են, որ Անանիան Քննիկոնը գրել է Անաստաս Կաթողիկոսի պատուէրով: Ուրեմն, Անաստաս Կաթողիկոսը ոչ միայն բարեհաճ է եղել Անանիայի նկատմամբ, այլ նաեւ գնահատել է նրան. նրան է յանձնարարել նոր ուսումնական ծրագիրն ու դասագիրքը ստեղծելու պատասխանատու գործը: Բնական է, որ պէտք է նաեւ վճարած լինի: Այնինչ, Անանիան գրում է. «Եւս ոչ ոք եղեւ շնորհակալ եւ մեծարաւդ իմոյ աշխատութեան»: Անանիայի այս գրածը ակնյայտօրէն հակասում է մեր պատմիչների յայտնածին: Այստեղ մի կողմից ունենք, մեր վաւերական պատմիչների վկայութիւնը առ այն, որ Անաստաս Ակոռեցի Կաթողիկոսը Անանիային պատուիրել է շարադրել Քննիկոնը նոր ծրագրով դպրոցական ձեռնարկը, միևն կողմից էլ ունենք, որ Անանիան ասում է, թէ ոչ ոք իրեն չի գնահատել եւ շնորհակալ չի եղել իր աշխատութեան համար: Ի՞նչպէս համաձայնեցնել իրար հակառակ այս տեղեկութիւնները:

Այստեղ հնարաւոր է լուծման երկու տարբերակ:

Կամ պէտք է ընդունել, որ Անանիան իր այս տողերը գրել է նախքան Կաթողիկոսից պատուէր ստանալը:

Կամ էլ հարկ է ընդունել, որ Անանիան այսպէս է գրել յատուկ միտումով:

Այս տարբերակներից առաջինը հարկ է բացառել: Պատճառն այն է, որ, ինչպէս ժամանակին ցոյց է տուել Արտ. Մաթեւոսեանը, Անանիայի «Վասն որպիսուրեան կենաց իւրաց» ինքնակենսագրութիւնը մասն է եղել Քննիկոնի եւ եղել է դրա սկզբնամասում<sup>23</sup>: Նըշանակում է, սա գրուել է Անաստաս Կաթողիկոսի պատուէրը ստանալուց եւ կատարելուց ոչ առաջ: Աւելին. նոյն շարադրանքի մէջ վկայաբերուած հատուածից յետոյ Անանիան գրում է. «Զի իրքեւ եկի ես, բազումք ընթացան առ իս յուսումն. եւ սուլ ինչ խելամտեալ՝ քողին զիս եւ գնացին, ոչ մնացեալք կատարման արուեստին, բաւական համարեալ վարուց կենցաղոյս զորչափիկն առին. եւ փոքր ինչ յինէն մեկուսացեալք՝ սկսան ուսուցանել՝ զոր ոչն գիտէին, եւ քարոզել զանձինս վարդապետս, որումն ոչ էին հասու»<sup>24</sup>: Շարունակութեան մէջ էլ պատմում է, որ բացի ինքնահռչակ վարդապետներ դառնալուց,

23 ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., Աշխ.:

24 ԱՆԱՆԻԱ. ՇԻՐԱԿՈՒՆԻ, Մատեմագրութիւմ, Աշխ., 209:

նաեւ իր մասին բամբասանքներ են տարածել, չարախոսել են, եւն.: Որպէսզի այս ամէնը կարողանար տեղի ունենալ, անհրաժեշտ էր ոռոշակի ժամանակ՝ Անանիայի դպրոց բացելուց եւ աշակերտներ աճեցնելուց յետոյ: Եթէ լիշենք, որ Անանիան ուսանել էր Տիւքիկոսի մօտ 8 տարի, ապա թէկուզեւ թերուս աշակերտ լինելու համար հարկ պիտի լինէր Անանիայի մօտ ուսանել գոնէ 4-5 տարի: Եթէ դրան էլ յաւելենք բամբասանք տարածելու համար անհրաժեշտ գոնէ 1-2 տարին, կը ստանանք, որ այս տողերը կարող էին գրուել Անանիայի Հայաստան գալուց առնուազն 6-7 տարի անց, ուրեմն՝ 672-673-ից ոչ շուրջ: Այս ժամանակ արդէն մահացած էր Անաստան Ակոռեցին, եւ, ուրեմն, շարադրուած էր նրա պատուէրով ստեղծուած Քննիկոնը: Սա եւս յանգեցնում է նրան, որ Անանիայի խնդրոյ առարկայ տողերը գրուել են Անաստան կաթողիկոսի պատուէրը ստանալուց եւ կատարելուց յետոյ:

Ուրեմն, իր «Վասն որպիսութեան կենաց իւրոց» ինքնակենսագրութեան մէջ Անանիան յատուկ միտումով է լրում Անաստան Ակոռեցուց պատուէր ստանալու եւ Քննիկոնը նրա պատուէրով գրելու մասին: Ինչո՞ւ: Հարցիս պատախանը գտնելու համար յիշենք, որ Անաստան Ակոռեցուց յետոյ մինչեւ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի ժամանակը Անանիայի Քննիկոնը եղել է կաթողիկոսարանում փակի տակ: Այսինքն՝ յատուկ արգելք է եղել Անանիայի այս երկի նկատմամբ: Իսկ այդ արգելքի պատճառը (կամ գոնէ՝ պատճառներից մէկը) պիտի լինէր դրա՝ Անաստան Ակոռեցու պատուէրով գրուած լինելը: Յիշենք Ներսէս Տայեցու (բնականաբար նաեւ՝ նրա սերտ գործակից Անաստան Ակոռեցու) նկատմամբ անբարեցակամ վերաբերմունքը եւ դրա հետեւանքով Ներսէս Տայեցու՝ իշխանութիւնից մեկուսանալը:

Բնականաբար, կարող էր նոյն մերժողական վերաբերմունքը տարածուել նաեւ Անաստասի հաւանած (ամենայն հաւանականութեամբ նաեւ՝ հովանաւորած) երիտասարդ գիտնականի նկատմամբ: Այս կերպ լիովին բացատրելի են դառնում Անանիայի հասցէին եղած քաղկեդոնականութեան մեղադրանքները<sup>25</sup>: Անանիայի աշխատութիւններից բխում է նրա ոչ միայն քաղկեդոնական չլինելը, այլ եւ քաղկեդոնական դաւանանքի դէմ Հայ Եկեղեցու դաւանական դրոյթները տեսականօրէն Հիմնաւորող ու հմուտ պաշտպան լինելը: Ըստ այսմ՝ քաղկեդոնականութեան մեղադրանքը Անանիայի հասցէին ընդամէնը անյաջող կրկնութիւնն է ներսէս Տայեցու հասցէին

25 ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Ա., Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, ՀՍՍՌ Մատենադարանի հրատարակչութիւն, Երևան 1944, 24-25:

եղած մեղադրանքների, որ յետոյ Ներսէսի եւ Անաստասի հակառակորդները կարող էին տարածել նաեւ Անաստասի հովանաւորեալ Անանիայի հասցէին: Փաստօրէն, Անաստաս Կաթողիկոսից յետոյ յաջորդները մերժողական վերբերմունք են ունենում Քննիկոնի նկատմամբ, իբրեւ Անաստաս Կաթողիկոսի նախաձեռնութեամբ ստեղծուած ձեռնարկ: Եւ ահա այս «մեղադրանքի» հիմքերը թաքցնելու համար Անանիան (եւ կամ Անանիայից յետոյ մի այլ ոք) Քննիկոնի այդ մասից հանում է դրա ստեղծման հանգամանքները Անաստաս Կաթողիկոսի հետ կապող մասերը: Ընդհանրապէս, չի բացառուամ, որ Քննիկոնի այդ մասը շարադրուած լինի յատուկ նպատակով, ցոյց տալու համար դրա ստեղծման հանգամանքները եւ հիմնաւորելու համար, որ Քննիկոնը կիրառելի ձեռնարկ է, «չկան հակացուցումներ»<sup>26</sup>: Ահա այս կերպ կարող ենք հասկանալ, թէ ինչո՞ւ Անանիան լուում է Անաստաս Կաթողիկոսի հետ իր ունեցած յարաբերութիւնների մասին:

Անանիայի անձի եւ նրա կոթողային երկի՝ Քննիկոնի դէմ մերժողական վերաբերմունքը կարող էր ունենալ վերը նշուածից զատ մի այլ բնական բացատրութիւն եւս:

Ինչպէս գիտենք, Անանիայից առաջ Հայաստանի կրթական համակարգում ներառուած են եղել միայն եռեակ գիտութիւնները, իսկ քառեակ գիտութիւնները բացակայել են իսպառ: Ահա այս հենքի վրայ դժուար չէ պատկերացնել, թէ ի՞նչ վերաբերմունք պիտի ունենային Անանիայի եւ նրա Քննիկոնի նկատմամբ այդ ժամանակ Հայաստանում եղած դպրոցների ուսուցիչները: Եթէ Քննիկոնը մտնէր կիրառութեան մէջ, ապա եղած բոլոր դպրոցների ուսուցիչները մի անգամից յայտնուելու էին թերուսի վիճակում, զի նրանց գիտելիքը առաւելագոյնս կարող էր Քննիկոնի կէսին հաւասարուել: Գառեակ գիտութիւնները, տոմարը եւ այլ նոր գիտակարգերը, որ ներառուած են եղել Քննիկոնի մէջ, նրանց հասու չէին: Ուստի, Հայաստանի գիտակրթական համակարգում իրենց ունեցած դիրքը չկորցնելու համար նրանք կամ պիտի այդ նոյն Քննիկոնով սովորէին Անանիայի մօտ, եւ կամ պիտի պայքարէին Անանիայի ու

26 Ընդհանրապէս, փոքր-ինչ տարօրինակ է, որ իբրեւ ուսումնական ձեռնարկ շարադրուած գրքի սկզբում հեղինակը տալիս է իր կենսագրութիւնը եւ ուսման հանգամանքները: Տպաւորութիւնը այն է, որ հեղինակը շանացել է հիմնաւորել իր գիտութեան արժանահաւատ լիմելը հեղինակաւոր արդիւրից դրա թվելը, կասկածելի հանգամանքների հետ կապուած չլիմելը: Սա էլ թոյլ է տալիս մտածել, որ այդպիսի հիմնաւորման ու բացատրութեան կարիք այդ ժամանակ եղել է, եւ այդ շարադրանքը Քննիկոնի մէջ դրուել է ի պատասխան ինչ-ինչ մեղադրանքների, յերիւրանքների:

նրա Քննիկոնի դէմ: Քանի կար Անաստաս Կաթողիկոսը, Անանիայի դէմ պայքարելը դժուար պիտի լինէր: Իսկ ահա Անաստասից յետոյ այլ աշխարհայեցքով Կաթողիկոսի օրօք թէ՛ Անանիան, եւ թէ՛ Քննիկոնը դառնում են էապէս խոցելի: Այսինքն, տեսնում ենք, որ Անանիան, իբրեւ գիտակրթական համակարգի յեղափոխիչ նորարար, պիտի շատ մեծ դիմադրութեան հանդիպէր այդ ժամանակ Հայաստանում առկայ կրթական համակարգի ներկայացուցիչների կողմից: Եւ այս դիմադրութեան բուն պատճառը ոչ թէ գաղափարական, կամ դաւանական, կամ քաղաքական էր, այլ հիմնուած էր պարզ անձնական շահի վրայ:

Ի մի բերելով կատարուած քննութեան արդիւնքները, ստանում ենք այսպիսի պատկեր:

Զ. դարի կէսերին ի յայտ եկած տոմարական խնդիրները լուծելու համար Հայոց Հայրապէտ Անաստաս Ակոռեցին ընտրել է ամենահիմնարար ուղին: Ժամանակաւոր լուծումների ճանապարհով գնալու փոխարէն նա միջոցներ է ձեռք առել տեղում տոմարագէտ մասնագէտ ունենալու, նրա միջոցով հարցերը լուծելու համար: Աւելին՝ նա փորձել է այնպէս ձեւափոխել Հայաստանի կրթական համակարգը, որ դրանից յետոյ հէնց տեղում աճեցուեն մասնագէտներ, կարիք չինի ուսանողներ ուղարկել արտասահման՝ տարբեր կարեւոր մասնագիտութիւններ (ի մասնաւորի՝ տոմար) սովորելու համար: Եւ այդ լուսաւոր ձեռնարկումի առաջին փայլուն արդիւնքն էլ եղել է Մեծն Անանիան, որին, ամենայն հաւանականութեամբ, կրթութեան ուղարկողն ու ետ՝ Հայաստան կանչողը դարձեալ եղել է նոյն Անաստաս Հայրապետը: Իր այս ձեռնարկումով Անաստաս Ակոռեցին համադրելի է Ս. Սահակ Պարթեւ Հայրապետին, որի եւ Ս. Մեսրոպի աճեցրած սաները մէջտեղ բերին հայ դպրութեան ոսկեդարը: Անանիային չափողուեց բնական ու ճշգրիտ գիտութիւնների «ոսկեդար» յառաջ բերել իր ժամանակի Հայաստանում: Սակայն Անահայից մօտ չորս դար անց Գրիգոր Մագիստրոսի նախաձեռնութեամբ եւ Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի աջակցութեամբ վերտարին կեանքի կոչուելուց եւ կիրառութեան մէջ դրուելուց յետոյ Անանիայի «հրաշագան» Քննիկոնը կատարեց իր մեծ գործը: Անմիջապէս սկսեց ի յայտ գալ եւ աճել հայ բնագէտ-գիտնականների փայլուն դպրոցը, որի պայծառ անուններից են Յովհաննէս Կողենը, Յովհաննէս Սարկաւագը, Յակոբ Ղրիմեցին եւ այլք:

### Summary

## ON THE CIRCUMSTANCES OF THE CREATION OF ANANIA'S *K'NNIKON*

GRIGOR BROUTIAN

The analysis of some data from a colophon of Anania Shirakouni (Shirakatsi) gives the exact date of his coming back to Armenia after completing his studies in Trebizond as 666 AD. Thus we know the dates when he completed his studies in Armenia (657) and went abroad for further studies (658). The comparison of these dates with the chronology of catholicoses of Armenia and the main historical events of that period gives us a new understanding of the circumstances of the creation of Anania's main work – the *K'nnikon*.

In 647, the 95-year Easter list created by Athanas Taronatsi in 552 was completed. Although it was necessary to compose a new Easter list, historical events did not allow the Armenian Church to accomplish that task. In 658, just as the Armenian-Arab peace treaty was negotiated, Anastas Akoretsi, who was the coadjutor of Catholicos Nerses Tayetsi, sent young Anania abroad for further education to study the quadrivium (arithmetic, geometry, music, and astronomy). In 665, the first “false Easter” happened when the Easter of Western churches took place a week before Easter in Armenia. Catholicos Anastas Akoretsi called Anania back and ordered him to write the famous *K'nnikon* – the new textbook for Armenian universities containing all the sciences of the time. Anania's *K'nnikon* contained both the trivium and quadrivium and some applied sciences as well. A large section of this work was devoted to the calendar. In his calendar (*tomar*) Anania also theoretically proved the credibility of the position of the Armenian Church for determining the dates for both Easter and Christmas. Anania's *K'nnikon* was not approved by the council of bishops and, after Anastas Akoretsi passed away, his successor Israyel Otmetsi held opposing attitudes to such issues. Anania's *K'nnikon* was forbidden for about four centuries until the time of Grigor Magistros and Catholicos Petros Getadardz.